

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Հարցաֆննելի է, որ եթե վեց օր յետոյ պէտք է ցոյց տար փառքը, ապա ինչո՞ւ վերը նշեց, թէ, «Սրանցից ոմանք մահ չեն գաշակի, մինչեւ տեսնեն Մարդու Որդու գալը»: Որպէս զի տեղեակ եւ կիրք լինէին այդ յայտնութեան մասին, կանխապէս ասաց որպէս զի օրերի թուին յաճախագոյն կարօտելով՝ մտապահեան: Իսկ նրանց այդ օրերից առաջ վեր չհանեց, որպէս զի միւս աշակերտները մարդկօրէն չմեղանչեան, քան զի բոլորն էլ ցանկանում էին գնալ նրա հետ տեսնելու փառքերի նախատիպը, այդ էր պատճառը, որ վեց օր համբերեց, որպէս զի մնացածներն էլ հանդարտուէին: «Եւ ապա վեց օր յետոյ, Յիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին եւ նրա եղբայր Յովհաննէսին»: Միւս աւետարանիչն «Ուր օր յետոյ» է ասում, սակայն ոչ թէ հակադրուելով, այլ հնարաւորին չափ միաբանուելով:

Թուում է, թէ մէկին այն օրն ասաց, երբ նրանց բարձրացրեց լեռը, իսկ միւսը՝ միայն վեց օր, որը երկուսի մէջտեղն է: Եւ արդ, թէպէտ այս այսպէս է, սակայն առանց խորհրդի չէ, որ մէկը վեց, իսկ միւսն ութ օր է գրում: Որովհետեւ վեցով, վեցերորդ դարի՝ առաջին գալուստն է խորհրդանշում, որի ժամանակ վեց օրեայ մարդկային բնութիւնը տիրական պատկեր է ստանում, նաեւ վեցեկի շարժմամբ անօրինացածը՝ կրկին նորոգուեց վեցերորդ օրուայ վեցերորդ ժամի իր այցելութեամբ:

Իսկ ութը՝ նախօրինակն է ութերորդ դարի, երբ յաւիտեանական միաշարաթին հանգստութիւն կը պարգեւի բոլոր վաստա-

"Իսկ վեց օր յետոյ՝ Յիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին եւ նրա եղբայր Յովհաննէսին" (Մատթ. Ժէ 1)

կաւորներին, որի ժամանակ ինքն էլ յարութիւն առաւ:

«Եւ վեց օրից յետոյ, Յիսուս վերցրեց իր հետ Պետրոսին եւ . . .»:

Մտորի՛ր աւետարանչի խոնարհութեան մասին, թէ ինչո՞ւ չի նսեմացնում նրանց, որոնք իրենից առաւել մեծարուեցին Քրիստոսի կողմից, բազում տեղերում նշելով «Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին»: Քանի որ սրբոց գնդերը ազատ են նախանձի զգացողութիւնից ու սնափառութիւնից: Բայց տեսնեմք, թէ ինչո՞ւ է միայն նրանց վերցնում:

Որովհետեւ, եթէ բոլորին վերցնէր, ապա Յուդան էլ նրանց հետ կը լինէր, նա՛ որ օտարացած էր Աստուծոյ շնորհներից ու փառքից, նաեւ արժանի չէր վայելելու Տիրոջ արքայութիւնը: Իսկ եթէ մէկն ասի, թէ, տակաւին, մասնիչ չէր: Արդ՝ թէպէտ բոլորի համար ծածուկ էր, սակայն Տիրոջը յայտնի էր Յուդայի սրտի չարութիւնը, դրա համար էլ տասներկուսին չտարաւ իր հետ: Սակայն, եթէ մնացածին վերցնէր, իսկ անարժանութեան պատճառով, սրան թողնէր, բաւականին մեծ հնարաւորութիւն կը ստեղծուէր մասնութեան համար, այս էր պատճառը, որ մնացածին թողեց նրան պահպանելու՝ իրրեւ գազանի:

«Յիսուս վերցրեց իր հետ Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին»: Իսկ այս ընտրութիւնը եւս պատահական չէր, որովհետեւ մնացածից առաւելագոյն էին:

Պետրոսին՝ որովհետեւ սիրում եւ ջերմ հաւատում էր Նրան, յայտնի է բազում տեղիներից:

Յովհաննէսին՝ քանզի Նրա կողմից շատ սիրելի էր, որ մինչեւ իսկ լանջովմ ընկաւ:

Իսկ Յակոբոսին՝ այն պատասխանի համար, թէ «կարող եմք ըմպել քաժակը»:

Որոնք ոչ միայն խօսքով այլ նաեւ գործով կատարեցին առաջինն իսկ յանձն առնելով: Դրա համար, միայն նրանք էին խաչի մօտ, երբ առանձնացած աղօթում էր, որ չգայթակղուեն իր չարչարանքներից: Հենց սրանք էլ հանդիսատես էին Նրա փառքերին, նաեւ, որ մտապահեն մարգարէների յորդորները, որոնք Նրուաղէմից դուրս գալու մասին խօսում էին, եւ յայտնում, թէ կամաւորաբար եկաւ չարչարուելու եւ ոչ թէ հարկադրաբար:

Դարձեալ երեքին միայն վեր հանեց, որպէս զի ցոյց տայ, թէ Նա ինքն է, որ մինչեւ երկինք գալիք արարչութեան խորհուրդներն ու անհռելի նախախնամութեան պարգեւները՝ երեք դասապետութիւնների, առաջին քահանայապետութիւնների՝ սերովքների, քերովքների եւ աթոռների միջոցով, որոնք անընդմիջաբար հաղորդակցում են լուսափայլութեան քիւմանը, որոնցմով բարետրապէս անցնում են ներքին շերտերը, իսկ նրանցից էլ համայն արարածներին: Այդպէս էլ, երբ մարմնաւորուեց, նոյն սահմանումն անփոփոխ պահելով, մարդեղութեան խորհուրդն ու երկրորդ Գալստեան նախատիպը նրանց՝ իբրեւ յոյժ մերձաւորների եւ վերինների սրբութեանը մօտ եղողների՝ Պետրոսին, Յովհաննէսին եւ Յակոբին, իսկ նրանց միջոցով էլ իրենց հետեւողներին եւ սրբազան հաւատացեալներին ի Քրիստոս:

«Եւ, վեր բարձրացրեց նրանց, մի առանձին բարձր լեռ»:

Բարձր լեռ, ումանք դրախտին եւ անուանում, քանզի աշխարհից էլ վեր, հաւասար լուսնական գնդին, առանձին պատուած քերովքներով եւ հողեղէնների

բնութիւնից բոցեղէն սրով զատուած, որի հետ եւ էլ եւմ համաձայն, քանզի տեսիլքն այն յարութեան ապացոյցն էր, իսկ Յարութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ առաջին փառքերի վերականգնումը: Այդ էր պատճառը, որ այնտեղ տանելով, աշակերտներին ցոյց տուեց Յարութեան խորհուրդը:

Ումանք ասում են, թէ այն Սիոն լեռն էր, որտեղ Դաւիթն ամբողջ կառուցեց, իսկ Պետրոսն էլ այս պատմութիւնից հետեւեցնելով «Սուրբ լեռ» է կոչում, թէ՛ «Նրա հետ եղանք Սուրբ լեռան վրայ», ըստ Դաւթի, թէ «Նրա հիմքերը իր սուրբ լեռան վրայ է», որտեղ հիմնարկելու էր Վերին Սիոնի խորհուրդը: Իսկ մի մասը Սիոնական է անուանում գագաթն այն, որը բարձր է եւ մեկուսի, որտեղ ստացան օրէնքներին ու պայծառացաւ Մովսէսի դէմքը, որն էլ յայտնապէս խորհրդապատկերում էր այս պայծառացումը: Նաեւ այնտեղ էր, որ Քաղուեց Մովսէսը, ինչպէս նաեւ փախաւ Հեղիասը, որը կրկին անգամ կանչեց եւ ցոյց տրուեց Աստուածութեան փառքը: Բայց հասարակութիւնը Թաքոր լեռ է կոչում, վկայելով մարգարէի խօսքը, թէ «Թաքորը եւ Հերմոնը կը ցնծան քո անունով»: Իսկ Պետրոսն ասում է թէ՛ «Հաստատապէս եմք ընդունում մարգարէական խօսքը, որին եթէ վստահանամք բարոք է»:

Արդ՝ նրանց բարձրացնում է լեռն՝ մարմնով, իսկ մտքով գիտութեան անհանելի իմաստներին է հասու դարձնում: Ինչո՞ւ, նախ՝ որ հրեաներից աներկիւղ պահի, որպէս զի տեսնելով չմոռանան՝ առանձնացնում է ապահով տեղում:

Երկրորդ՝ ինչպէս վերին ազդմամբ Պետրոսը դաւանեց, եւ Որդի խոստովանեց, եթէ ոչ մարմին եւ արիւն, այլ «Հայրն իմ որ երկնքում է քեզ յայտնեց»: Վեր հանեց լեռը, որպէս զի Պետրոսն իր իսկ ականջով լսի Հօր կողմից այն, ինչ որ իր քերանով վկայեց:

Երրորդ՝ ցոյց տայ իր Աստուածութեան փառքը՝ Յարութիւնից առաջ, որպէս զի, երբ Յարութիւն առնէր մեռելներից իմանան, որ ոչ թէ տառապանքի համար ստացաւ փառքը, այսինքն՝ խաչելութեան, այլ խաչից առաջ էլ փառքն ունէր, ըստ այնմ, թէ՛ «Հայր փառաւորիւր ինձ քո փառքով, որն ունէի աշխարհի արարումից առաջ»:

Չորրորդ՝ որպէս զի ընկալեն փառքերի վայելչութիւնը, որի համար էլ հրամայեց նրանց ակնանտես լինել:

Հինգերորդ՝ հաւասարեցնում է Մովսէսին, ինչպէս նրան բարձրացրեց Սինայ լեռը եւ փառեղէն տախտակների վրայ տուեց պատժող գրաւոր օրէնքները: Նմանապէս էլ Նոր Կտակարանում պաշտօնեաներին Թաքոր լեռը վեր հանեց, ոչ թէ մէզով պատուած, այլ փառքով զարդարուած, հոգեւոր օրէնքները գրելով նրանց շնորհալից սրտերի վրայ: Իսկ առանձին կամ մեկուսի տեղում է ասում, որպէս զի ուշադիր լինէին տեսիլքին կամ էլ նրանց առանձնացնէր ուրիշներից:

2.- «Եւ այլակերպուեց նրանց առջեւ: Եւ լուսաւորուեց նրա երեսը արեգակի պէս, իսկ նրա հանդերձները լոյսի պէս սպիտակ դարձան»:

Իր երեսի կերպարանքը փոփոխեց մինչեւ մահուան աստիճան, որպէս զի «տեսնեն նրա երեսի գեղեցկութիւնը»՝ ըստ Դաւթի, որ «չերկմտեմ նրա երեսի փոփոխութիւնից՝ մինչեւ մահ իսկ տկարանալով», ըստ Նաայի մարգարէի: Եւ դարձեալ, «Ովքեր խաչակից են նրա փառքերին»՝ նրանց երեսի կերպարանքը լոյսի կը փոխուի», ըստ առաքելի՝ «Մեր մարմնի խոնարհութիւնը կերպարանակից կը դարձնի իր մարմնի փառքերին»: Ըստ Յովհաննոս թէ՛ «Նրա նման լինեմք, քանզի տեսանք նրա փառքերը՝ Հօրից վերցրած՝ Միածնի փառքի պէս, շնորհներով եւ նշարտութեամբ լեցուն»:

«Եւ այլակերպուեց» - ասում է -

նրանց առջեւ, եւ նրա երեսը արեգակի պէս լուսաւորուեց»:

Մովսէսից առաւել, որովհետեւ Մովսէսինն արտաբնական էր, իսկ Տիրոջ Աստուածային արտափայլումը՝ ներբնական: Բայց «Արեգակի պէս» ասելը, ոչ այդչափ նկատի ունի միայն, այլ առաւել եւս, մինչեւ անգամ, իր երեսի պայծառութիւնը ծածկում էր արեգակի լոյսը, սակայն քանզի չկա մեր շրջապատում առաւել մեծագոյն լոյսի աղբիւր, դրա համար էլ արեգակի հետ է բաղդատում: Նաեւ պատահական չէ, որ նրա երեսը արեգակի պէս էր լուսաւորուած, քանզի Արդարութեան արեգակ լինելով՝ այրում էր խաւարի գործերը, եւ փարատում տգիտութեան եւ կոռապաշտութեան մութ գիշերը, պայծառացնելով մարդկանց աստուածային գործերը:

Եւ դարձեալ, Աստուածութեան երեսը ցոյց տուեց, որպէս զի ճանաչեն, թէ վեր է առաւել քան չարչարանքները, որոնք կամաւորաբար է կրում մեր փրկութեան համար:

Նաեւ առաքելները խնդրում էին սովորեցնել, թէ ինչպէս է գալու երկնից՝ ցոյց տուեց օրինակը: Յարութիւնից յետոյ միայն պատրաստ էին տեսնել նրան, սակայն այստեղ ցոյց տուեց, որպէս զի իմանան, թէ Նա էր, որ Յարութիւն առաւ, եւ ոչ այլ ոք, եւ հաւատան, թէ, «Նաեւ արդարները՝ արեգակի նման կը ծագեն երկնային արքայութիւնում: Դարձեալ, իր կողմից ցոյց տուեց այն փառքը, քանզի դեռ անմեղ էր Ադամը, որովհետեւ արեգակի նման փայլում էր Դրախտում»:

«Եւ նրա հանդերձները լոյսի պէս սպիտակ դարձան»:

Մարկոսն ասում է, թէ՛ «Երկրի վրայ չկայ մի այնպիսի միւր, որ կարողանար այդպէս սպիտակացնել», այսինքն՝ թէպէտ ունեւ իրենց անձերը մաքրում են մեղքերից, սակայն չեն կարող վերակենդա-

նացնել, որպեսզի իմանան թե՛ նա, որ փոխեց իր հանդերձները, նոյնպես կը վերակենդանացնի մարմինն իր, որ մարմնաւորուել էր: Նա մեր յարութեան ժամանակ, որ տուեց մեզ Հոգի եւ անմատոյց փառք, կարող է ապրեցնել նաեւ այնտեղ՝ մահուան պահին, ինչպէս որ մարմնապէս նաշակում ենք Նրան:

Իսկ նշանակալիութեամբ Տիրոջ այլակերպուելը ցոյց էր տալիս հին օրէնքի փոխուելը դէպի նորը, ինչպէս ստուերը՝ լոյսի վերածելով: Իսկ նրա երեսի պայծառութիւնը արեգակի պէս՝ նախանշում էր Աւետարանի վարդապետութիւնն ու առաքելական աստուածաբանութիւնը, որտեղ լուսապայծառ վերլուծութեամբ մեկնաբանում են աստուծային բանքի իմաստը:

Իսկ «հանդերձները լոյսի պէս դարձան»: Խորհրդանշում է նորածինների մահբուրքիւնը աւագանի մկրտութեամբ, որով սպիտակած պայծառացան առաջին մեղքերից, եւ դարձան մեր Տիրոջ հանդերձներն, ըստ մարգարէին. «Կենդանի եմ եւս, ասում է Տէրը», նաեւ թէ՛ «Ձեզ բոլորիդ իբրեւ հանդերձ գգեստւորեցի»: Որն էլ տեսաւ Յովհաննէսը՝ ներմակ գգեստներ գցուած իրենց վրա:

3.- «Եւ ահա նրանց երեսացին Մովսէսն ու Նղիան, որոնք խօսում էին Նրա հետ»:

«Ահա» բառը ցոյց է տալիս յանկարծակիութիւնը, որովհետեւ նրա երեսի փառաւորումից մարգարէների երեսալը՝ իսկոյն վկայեց թէ Սա էր, որ Սինա լեռան վրա փայլատակմամբ երեսաց: Եւ Նղիային Սիգում նրբօրէն յայտնուեց, նոյնպէս եւ այժմ առաքելների առաջ այլակերպուեց: Դա սոսկ տեսիլք չէր, ինչպէս Սամուէլը Սաւուդի առաջ, այլ ստոյգ կերպով եկած եւ այնտեղ ժամանած Տիրոջ հրամանով:

Ինչո՞ւ փառաւորուելուց յետոյ երեսա-

ցին Մովսէսն ու Նղիան, եւ ոչ թէ փառքից առաջ, եւ կամ ինչո՞ւ համար երեսացին փառքից յետոյ. որպէսզի ցոյց տայ, թէ հանդերձեալ աշխարհում է յայտնուելու արդարների վայելչութիւնը, ըստ այնմ թէ «Երբ Քրիստոս կը յայտնի ձեր կեանքը՝ այն ժամանակ էլ դուք նրա հետ կը յայտնուէք փառքով»:

Բայց ինչո՞ւ Մովսէսին ու Նղիային բերեց՝ խօսակից դարձնելով իր հետ: Պիտի ասենք՝ բազում են պատճառները:

Նախ այն, որ ժողովրդից ոմանք ասում էին Քրիստոսին, թէ Նղիան է, իսկ միւսները Երեմիան կամ մարգարէներից որեւէ մէկը. բերեց կանգնեցրեց մարգարէներին գլխաւոր լեռան կատարին, որպէսզի տեսնեն Տիրոջ եւ ծառաների տարբերութիւնը, որտեղից եւ նախաչեն, թէ իրաւացիօրէն գովաբանուեց Պետրոսի կողմից:

Երկրորդ՝ որովհետեւ բամբասում էին նրանից, թէ օրէնքը չի պահում, եւ կարծում էին, թէ Հօր փառքը որ նրանց կողմից չընկալուեց, մարմնապէս էին խորհում, ասելով, թէ՛ «Դու մարդ ես, բայց բռնանաւ Աստուած եւ դարձում»: Ցոյց տուեց Մովսէսով եւ Նղիայով՝ թէ նախանձից են բամբասում: Որովհետեւ եթէ օրէնքը խախտեր, կամ էլ Հօր փառքը յափշտակեր, ապա Մովսէսը, որ օրէնքները տուեց, եւ Նղիան, որ Աստուծոյ փառքերի վրէժխնդիրն էր, յանձն չէին առնի այցելել մի օրինազանց մարդու, որը հայրերի կրօնին հակառակ էր: Եւ կամ էլ վկայել մէկին, եթէ ստոյգ չիմանային, թէ Աստուծոյ Որդի է Նա:

Երրորդ՝ սովորիր, որ Նա է Տէրը կենդանի ապրողների եւ մեռելների, վերիններն ու ներքիններն առհասարակ իր իշխանութեան տակ են: Ուստի մէկը կենդանի ապրողներից, իսկ միւսը՝ մահացածներից կանչեց յառաջ բերելով:

Չորրորդ՝ որովհետեւ եկաւ ոչ միայն

նացնել, որպես զի իմանան թե՛ նա, որ փոխեց իր հանդերձները, նոյնպես կը վերակենդանացնի մարմինն իր, որ մարմնաւորուել էր: Նա մեր յարութեան ժամանակ, որ տուեց մեզ Հոգի եւ անմատոյց փառք, կարող է ապրեցնել նաեւ այնտեղ՝ մահուան պահին, ինչպէս որ մարմնապէս ճաշակում ենք Նրան:

Իսկ նշանակալիութեամբ Տիրոջ այլակերպուելը ցոյց էր տալիս հին օրէնքի փոխուելը դէպի նորը, ինչպէս ստուերը՝ լոյսի վերածելով: Իսկ նրա երեսի պայծառութիւնը արեգակի պէս՝ նախանշում էր Աւետարանի վարդապետութիւնն ու առաքելական աստուածաբանութիւնը, որտեղ լուսապայծառ վերլուծութեամբ մեկնաբանում են աստուծային բանքի իմաստը:

Իսկ «հանդերձները լոյսի պէս դարձան»: Խորհրդանշում է նորածինների մաքրութիւնը աւազանի մկրտութեամբ, որով սպիտակած պայծառացան առաջին մեղքերից, եւ դարձան մեր Տիրոջ հանդերձներն, ըստ մարգարէին. «Կենդանի եմ եւս, ասում է Տէրը», նաեւ թէ՛ «Ձեզ բոլորիդ իբրեւ հանդերձ գգեստւորեցի»: Որն էլ տեսաւ Յովհաննէսը՝ ներմակ գգեստներ գցուած իրենց վրա:

3.- «Եւ ահա նրանց երեսցին Մովսէսն ու Նղիան, որոնք խօսում էին Նրա հետ»:

«Ահա» բառը ցոյց է տալիս յանկարծակիութիւնը, որովհետեւ նրա երեսի փառաւորումից մարգարէների երեսալը՝ իսկոյն վկայեց թէ Սա էր, որ Սինա լեռան վրա փայլատակմամբ երեսաց: Եւ Նղիային Սիգում նրբօրէն յայտնուեց, նոյնպէս եւ այժմ առաքելների առաջ այլակերպուեց: Դա սոսկ տեսիլք չէր, ինչպէս Սամուէլը Սաւուդի առաջ, այլ ստոյգ կերպով եկած եւ այնտեղ ժամանած Տիրոջ հրամանով:

Ինչո՞ւ փառաւորուելուց յետոյ երեսա-

ցին Մովսէսն ու Նղիան, եւ ոչ թէ փառքից առաջ, եւ կամ ինչո՞ւ համար երեսացին փառքից յետոյ. որպէս զի ցոյց տայ, թէ հանդերձեալ աշխարհում է յայտնուելու արդարների վայելչութիւնը, ըստ այնմ թէ «Երբ Քրիստոս կը յայտնի ձեր կեանքը՝ այն ժամանակ էլ դուք նրա հետ կը յայտնուէք փառքով»:

Բայց ինչո՞ւ Մովսէսին ու Նղիային բերեց՝ խօսակից դարձնելով իր հետ: Պիտի ասենք՝ բազում են պատճառները:

Նախ այն, որ ժողովրդից ոմանք ասում էին Քրիստոսին, թէ Նղիան է, իսկ միւսները Երեմիան կամ մարգարէներից որեւէ մէկը. բերեց կանգնեցրեց մարգարէներին գլխաւոր լեռան կատարին, որպէս զի տեսնեն Տիրոջ եւ ծառաների տարբերութիւնը, որտեղից եւ ճանաչեն, թէ իրաւացիօրէն գովաբանուեց Պետրոսի կողմից:

Երկրորդ՝ որովհետեւ բամբասում էին նրանից, թէ օրէնքը չի պահում, եւ կարծում էին, թէ Հօր փառքը որ նրանց կողմից չընկալուեց, մարմնապէս էին խորհում, ասելով, թէ՛ «Դու մարդ ես, բայց բռնանաւ Աստուած եւ դարձում»: Ցոյց տուեց Մովսէսով եւ Նղիայով՝ թէ նախանձից են բամբասում: Որովհետեւ եթէ օրէնքը խախտեր, կամ էլ Հօր փառքը յափշտակեր, ապա Մովսէսը, որ օրէնքները տուեց, եւ Նղիան, որ Աստուծոյ փառքերի վրէժխնդիրն էր, յանձն չէին առնի այցելել մի օրինազանց մարդու, որը հայրերի կրօնին հակառակ էր: Եւ կամ էլ վկայել մէկին, եթէ ստոյգ չիմանային, թէ Աստուծոյ Որդի է Նա:

Երրորդ՝ սովորիր, որ Նա է Տէրը կենդանի ապրողների եւ մեռելների, վերիններն ու ներքիններն առհասարակ իր իշխանութեան տակ են: Ուստի մէկը կենդանի ապրողներից, իսկ միւսը՝ մահացածներից կանչեց յառաջ բերելով:

Չորրորդ՝ որովհետեւ եկաւ ոչ միայն

ապրողներին փրկելու, այլև ղեկավարելու գտնուող հոգիներին ազատելու: Արդ՝ Նդիայի միջոցով վերին եւ ստորին բանականներին աւետիս տուեց փրկելու՝ մարդկանց իր գալստեամբ, որոնց փրկութիւնը խնդութիւն էր վերինների համար: Եւ ղեկավարելու իր մահուամբ, որ Մովսէսի միջոցով ճանաչուեց, վեր բարձրացրեց ղեկավարից:

Հինգերորդ՝ որպէս զի խրատի աշակերտներին, Մովսէսի նման լինել հեզ, քանզի Մովսէսն ասում էր. «Նքէ նրանց թողութիւն տաս թողութիւն տուր ինձ էլ. ապա թէ ոչ, ինձ էլ չնչիր բռնաբարութիւնից, որ գրեցիր»: Եւ դարձեալ՝ սաստիկ նախնաձայնով լինել Նդիայի պէս, որը երեւ տարի սովով տանջեց անարժան ժողովրդին:

Վեցերորդ՝ նրանցից պահանջում էր առաքինութիւն, ինչպէս Մովսէսն ու Նդիան իրենց ժամանակին ցոյց տուեցին, քանզի ասաց, թէ՝ «Ով կամենայ իմ ետեւից գալ, պիտի վերցնի խաչը եւ գայ ինձ հետ»: Արդ՝ որպէս զի չվատուէին մարգարէների միջոցով էր մխիթարութիւն մատուցում եւ ցոյց էր տալիս նրանց փառքով, որ միշտ չվշտանան, քանզի կ'անցնեն պատերազմներն, ու չարչարաբաններից յետոյ կը հասնեն փառքի եւ հանգստի, ինչպէս մարգարէները, որոնք թէպէտ չարչարուեցին՝ մէկը՝ փարաւոնից, միւսն՝ Աֆայարից, բայց նրանց չարչարանքները եղան փառքի պատճառ:

Եօթներորդ՝ նրանց կամաւոր աղատութիւն քննեց, եւ որպէս զի ծանր չհամարեն, բերեց Մովսէսին, որն առաւել քարի էր համարում Քրիստոսի նախատիպները՝ քան եզրափակողների բազում գանձերը եւ արդարի ոսկորներն էր կրում միայն: Նաեւ Նդիան, որ միայն մաշկեղէնով (վերարկով) էր քաւարարւում, այն էլ՝ որովհետեւ հին օրէնքում էին:

Ութերորդ՝ եկեղեցուն յայտնեց, թէ

ոչ միայն սոսկ Որդունն են իր արքայութեան փառքերը, այլեւ կոյսերինն ու ողջախոհ ամուսնացածներինը: Ուրախութիւն տուեց ի փառս Աստուածութեան՝ եկեղեցու խորհուրդների, որն ունի կոյսեր եւ պարկեշտ ամուսնացեալներ, ինչպիսիք էին այնտեղ Մովսէսը, Պետրոսը, Նդիան ու Ջեքեղիայի որդիները:

Իններորդ՝ Մովսէսին երբայեցողք քանակի զօրավար դարձրեց, իսկ Նդիային անապատաքնակ, որպէս զի ճանաչեց, թէ աշխարհի արեւստները չեն կարող մեզ հեռացնել Աստուծոյ, միայն թէ՝ ըստ նրա կամքի մեր ընթացքը իրագործեն:

Տասներորդ՝ Մովսէսն ու Նդիան միաբանեցին առաքելների հետ, որպէսզի իրագործուի հնի եւ նորի միաբանութիւնը՝ փառաւոր առնելով երկուսին էլ, ըստ առաքելի, եթէ դատապարտութեան պաշտօնը փառքով է, ապա որքան առաւելապէս արդարութեան պաշտօնը փառքերով կը լինի:

Տասնմէկ՝ Մովսէսն ու Նդիան ձգտեցին տեսնել նրան, եւ քանզի ժամանակը չէր եկել, որ կատարէր նրանց համար, այն պահեց իր գալստեան ժամանակ, որպէս զի երբ տեսնեն իրեն մարմնով՝ վկայեն, թէ իրօք Աստուած է, քանի որ չէին քաւարարւում տեսնել առանց մարմնի, տեսան մարմնով եւ նրանց իզձը կատարուեց, որովհետեւ ցանկանում էին տեսնել նրան, ըստ այնմ. «Իր երկու-դածների կամքը կատարում է»:

Տասներկուերորդ՝ որ ուսուցանի նրանց, թէ մէկ ուրիշը չէ, այլ ինքն է, որ Մովսէսին եզրափակող առաքել, եւ հրաման տուեց Նդիային, իսկ այժմ իր հրամանով կանչեց, աշակերտներն էլ լսելով մարգարէների՝ մի Աստուած Հին եւ Նոր օրէնքների բաշխող խոստովանեցին:

Տասներեք՝ քանզի տեսիլքն այս արքայութեան խորհուրդն էր կրում, բերել տուեց երկուսին՝ որպէս զի հաստատուն

լինի յարութիւնը եւ դատաստանի վախճանը, թէ ովքեր մեռած են՝ Մովսէսի մամն կը յառնեն, իսկ ովքեր կենդանի են՝ Նղիային պէս կը բռչեն:

Տասնչորս՝ Բանգի Մովսէսը կրում էր օրէնքների խորհուրդը, իսկ Նղիան՝ մարգարէների, որոնք տեսան նրա փառքերը, որոնցմով հաւատում ենք, թէ օրէնքներով ու մարգարէութիւններով ֆարգուեց նրա խաչի խորհուրդը, որը Սուրբ Եկեղեցու փառքն է:

Տասնհինգերորդ՝ Բանգի Ջեքեղիայի որդիները փառք խնդրեցին, մէկը աչից, իսկ միւսը՝ ձախից, իսկ նա էլ ասաց՝ Իմ բաշխելով չէ, այլ ում որ կը տրուի՝ Հօրից է: Դրա համար էլ Մովսէսը աչից եւ Նղիան էլ ձախից երեսացին, որպէս զի տեսնեն, թէ նախ պէտք է չարչարանքներին հաղորդակից լինել ինչպէս նրանք, ապա միայն փառքերին:

Տասնվեցերորդ՝ որ իմանայ Պետրոսը, թէ հրեշտակները երկնքից, իսկ արդարները՝ երկրից սպասում եւ ակնկալում էին նրա մահուանը, դրա համար էլ Նղիան երկնքից, իսկ Մովսէսն էլ երկրից յայտնուեց:

Տասնօթերորդ՝ Բանգի երկու եւ երեք վկաներով է հաստատում ամէն բան, այնպէս էլ երեքը ներքինից, իսկ երկուսն ի վերուստ վկայեցին նրա Աստուծութեանը:

Քննելի է նաեւ այն հարցը, թէ առաքելները, որտեղից հանաչեցին մարգարէներին, ոմանք ասում են, թէ նրանց նկարները տախտակի վրայ պատկերուած ունէին, իսկ այլք, թէ Մովսէսը թոթովախօս էր եւ ծանրալեզու, իսկ Նղիան քաւամազ, մաշկեկով հանդերձ, որի օրինակով էլ տեսնելով հանաչեցին: Կեսն էլ, թէ՛ իմացան աշակերտները Մովսէսին ու Նղիային, ինչպէս Յովհաննէս Մկրտիչն էլ հանաչեց մեր Տիրոջն՝ ասելով. «Ահա գառն Աստուծոյ»: Յայտնի է՝ Հոգով:

Բայց ինձ թւում է, թէ իրողութիւնը՝ Յարութեան նմանողութիւնն էր, նաեւ յարութեամբ էլ հանաչելու ենք միմեանց ինչպէս մեծատունը Արքահամին՝ մի մարդու, որը վաղուց մահացած էր:

«Եւ ահա երեսացին - ասում է - նրանց Մովսէսն ու Նղիան, որոնք խօսում էին Տիրոջ հետ»:

Ի՞նչ էին խօսում, յայտնի է, թէ վախճանի մասին, որը կատարուելու էր Նրուսաղէմում, այսինքն՝ չարչարաբաններից ու խաչից, որոնց միշտ «փառքեր» են կոչում գրքերը: Կանչուած մարգարէներն էլ էին յորդորում, որտեղ առաքելներն էլ էին ներկայ: Այս էր պատճառը, որ երբ ասում էր, թէ «Հոգիս յօժար է»՝ մարգարէները՝ Բանգի հոգով խօսեցին, «Իսկ մարմինս՝ տկար», այսինքն՝ առաքելները, Բանգի դեռեւս չէին ընդունել Հոգին, իսկ Յիսուս դեռ չէր փառաւորուել: Դրա համար էլ մարգարէներն աղերսում էին նրան իրագործել համայն մարդկութեան փրկութիւնը, դրանով իսկ պատահելով Ադամի պարտեաց գիրը, որն էլ լսելով հաւանցին առաքելները: Իսկ այնուհետեւ մարգարէների եւ առաքելների միաւորութիւնն իրագործուեց, ինչպէս այժմ Եկեղեցում համաձայնուած են մարգարէութիւններն ու առաքելների վարդապետութիւնը, Բանգի երկու դասերն էլ նրա հետ էին խօսում եւ նրան վարդապետում:

4.- «Պատասխանեց Պետրոսն ու ասաց Յիսուսին. Տէր՝ բարեւ է մեզ այստեղ լինել»:

Բանգի Պետրոսը լսեց մարգարէներից՝ որոնք խօսում էին Նրուսաղէմից դուրս գալու մասին, մանաւանդ Տիրոջից, որ կը գնայ այնտեղ եւ կը չարչարուի: Տակաւին մտնով կասկածում էր, հոգս փաշում եւ երկնչում էր նրա համար, բայց ազատելուց յետոյ չէր համարձակուում հակառակուել, սակայն այլ խօսքերով գրեթէ նոյնն էր

ակնարկում, «Բարւո՛ք է մեզ այստեղ լինել»։ Եւ դարձեալ, քանզի գիտէր դպիրների նախանձը, ինչպէս նաեւ հրեաների խուճապը, իսկ այստեղ ապահով էին տեղանքի հեռաւորութեան եւ ամրութեան պատճառով, կամենում էր, որ հանապազ այնտեղ լինէր, եւ եթէ յանդգնէն յայտնել, ապա հրեաներն այստեղ էլ ցոյց կը տան իրենց հակառակութիւնը՝ Մովսէսն ու Եղիան մեզ մօտ են, մէկը Եգիպտոսում տանջեց խստասիրտներին, իսկ միւսը հուր իջեցրեց եւ յիսուցին այրեց, կը չարչարեն նաեւ իրենց։ Եւ այս ամէնը ոչ թէ անձի անգիտութեան պատճառով էր, այլ առաւել եւս վարդապետի նկատմամբ տածած սիրոյ։ Եւ իրօք այդպէս է, քանզի յայտնի է մահուան ժամանակ, որ ասում էր, «Բեզ հետ պատրաստ եմ մեռնելու»։ Այնքան ամբոյսի մէջ էլ անձն իր մահուան էր մատնում, կտրելով ծառայի ունկը, որովհետեւ իր անձին չէր սպասարկում այդպէս, այլ իր Տիրոջ համար էր դողում։ «Բարւո՛ք է – ասում է – մեզ այստեղ լինել»։

Կրկին՝ հանելի թուաց Մովսէսի եւ Եղիայի հետ քնակուել, քանզի դրախտի անմահութեան հուրը բուրեց նրանց բիւրից, եւ տեսաւ Աստուծոյ փառքերը՝ անարգանքների փոխարէն, յոյժ ուրախութեան ցանկութեամբ, ասում էր ... «Բարւո՛ք է մեզ այստեղ լինել»։

Իսկ նշանակալիութեամբ այդպիսին է, քանի որ ոմանք ասացին չկայ յարութիւն. սակայն, երբ ճշմարիտներից յանդիմանուեցին, որոնք հաստատեցին բնութիւնից, թէ մարդուս բնոյթը փոփոխական է, քանզի անեութիւնից եկանք էութիւն, իսկ այնտեղից էլ անձնիշխան կամով դէպի չարը խոտորուեցինք, նմանապէս էլ փոփոխմամբ, դարձեալ ի բարին կը բարձրանանք։ Որի մասին հակառակն են ասում, «Եթէ այդպէս է, ապա այնտեղից դարձեալ դէպի չարը նորից կը թաւալուենք»,

որն անպատասխան է թողնում այժմ առաքեալն ասելով, թէ՛ «Բարւո՛ք է մեզ այստեղ լինել»։ Այսինքն, թէ չարից փորձուեցինք, սակայն այժմ ախորժում ենք, որ բարին աւելացնենք, եւ դարձեալ դէպի չարը չթեւակոխենք։

«Եթէ կամենաս, երեք տաղաւարներ կը հիմնենք, մէկը՝ քեզ, միւսը՝ Մովսէսին, իսկ մէկն էլ՝ Եղիային»։ Սկզբում մտածում էր, թէ դարձեալ ընդդիմանալով սաստիկ կշտամբանք չլինի. «Եթէ կամենաս երեք տաղաւարներ կը հիմնենք»։ Ի՞նչ եւ խօսում, ով Պետրէ, քիչ առաջ չբաժանցի՞ր նրան ծառաներից, արդ՝ ինչո՞ւ եւս դարձեալ ծառաների հետ դասում, թերեւս ձեր երեքիդ համար մենք պատրաստ ենք երեք տաղաւարներ, եւ սպասաւորենք ձեր պէս վեհ անձանց։

Բայց քանզի անկատար էին խաչելութիւնից առաջ, չնայած որ, Հայրը նրան յայտնեց, բայց յայտնութիւնը միշտ չէր որ իր հետ ունէր, քանզի տագնապած էր ահից, ոչ միայն այն քանից, որ ասացին, այլեւ ահագին տեսիլից եւ լոյսի սաստիկ ճառագայթներից։ Դրա համար էր, որ Մարկոսն ու Ղուկասն ասում են, թէ՛ «Զգիտէր, թէ ի՞նչ էր խօսում»։

Արդ, թէպէտ այսպէս էր, սակայն նա մեծ իմաստութիւն բարբառեց իր տգոտութեան մէջ։ Քանզի երեք տաղաւարների յօրինմամբ՝ երեք անձերի խորհուրդը վեր հանեց, քանզի այնտեղ յայտնուեց Սուրբ Երրորդութիւնը՝ Հայրը՝ վկայութեամբ, Որդին՝ պայծառակերպութեամբ, իսկ Հոգին՝ ամպեղէն հովանաւորութեամբ որպէս զի ճանաչէին երեքն էլ, աստուածութեան երեք անձերին եւ պատմեն նրա գալուստը, թէ ինչի համար եղաւ։ Միանգամայն տաղաւար պատրաստեն Երրորդութեան համար՝ հոգում, մտքում եւ մարմնում։

Իսկ ուրիշները երեք խորհուրդ են

վերագրում տաղաւարին՝ որն ամանդութեամբ պահպանում ենք՝ մէկը՝ յանուն Տիրոջ ծննդեան, միւսը՝ Մովսէսի աղուհացին, իսկ մէկն էլ՝ Եղիայի այլակերպութեանը:

5.- «Եւ մինչդեռ նա խօսում էր, ահա լուսաւոր ամպը հովանի եղաւ նրանց վրայ»:

Պետրոսը ձեռագործ տաղաւար էր յօրինում, իսկ Հայրն ի վերուստ տնօրինում էր անձեռակերտին, որպէս զի իմանայ, թէ պէտք չունի մարմնական տաղաւարի: Բայց թէ ինչո՞ւ էր ամպով երեսում, կամ ի՞նչ է լուսաւոր ամպը: Աստուծոյ սովորութիւնն է ամենուր ամպով երեսալ, ըստ այնմ, թէ՛ «Ամպն ու մէզը նրա շուրջն են» «Ամպերում հիմնեց իր ընթացքը», «նստած թեթեւ ամպի վրայ», Եզեկիէլը տեսաւ մեծ ամպ սերովքէնքի մէջ, «Մարդու Որդին կը գայ երկնի ամպերով»: Թէ՛ անհառելիութեան համար, ինչպէս նաեւ բեղմնաւոր եւ անեցնող լինելով, նաեւ իմանալի անձրեւը իբրեւ բժշկական շնորհի ցօղ, թէ՛ արագութեան համար, ամենուրեք ծամանելու: Իսկ այստեղ լուսաւոր. քանզի երբ որեւէ սպառնալիք էր բարբառում՝ խաւարային ամպով էր երեսում, ըստ Դաւթի. «Խաւարային ջրերը մինչեւ ամպերն ու մէզը»: Սակայն այստեղ ոչ թէ վախեցնել էր կամենում՝ այլ ուսուցանել, դրա համար էլ՝ ամպը լուսաւոր էր, իսկ ձայնն էլ ոչ սպառնական, այլ քաղցրալուր: Կրկին անգամ՝ լուսաւոր ամպը, ինչպէս ասացի, Սուրբ Հոգու նշանն է. լուսաւորելու նրանց միտքը եւ ծանուցելու, թէ նա է նշմարիտ լոյսը, որը լուսաւորում է աշխարհ եկած բոլոր մարդկանց, կամ Տիրոջ մարմինը՝ աստուածութեան պայծառացած ամպ լուսաւոր լոյսով, ըստ այն երգի, թէ՛ «Մեր մահիճների հովանաւոր»:

Որն էլ զովացրեց մեղքերի տապից եւ հանգստացրեց բեռների ծանրութիւնից՝ որոնք վերաբերում էին օրէնքներին, մար-

գարէներին ու Աւետարանին:

Ձայն լսուեց ամպից, որն ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, որին հաւանեցի, լսեցէ՛ք Նրան»:

Պէս-պէս տեսութիւններ եւ վկայութեան ձայներ եղաւ Պետրոսի մասին, որը հակառակ էր Տիրոջ չարչարաններին:

Դրա համար էլ նախ Քրիստոս փառաւորուեց, որ չկարծեն իր մահն ակամայ, կամ նրա փառքերին պակասութիւն լինի: Մարգարէներն էլ գալով նոյնը յորդորեցին: Իսկ այժմ էլ ամենամեծ եւ հաւատարմութեան արժանի Հայրն ամպից բարբառում էր: Եւ թէ ինչո՞ւ ամպի միջից: Ասում է, քանզի ոչ Յիսուսն էր խօսում, ոչ Մովսէսը եւ ոչ էլ Եղիան, այլ Հայրն ամպի միջից՝ ինչպէս նշում է: Իսկ ինչ էր բարբառում. «Դա է իմ սիրելի Որդին»:

Նախ որ աշակերտները հաւատան, թէ նա է իսկապէս Որդին Աստուծոյ, նամանաւնդ Պետրոսը, քանզի որ Հօր յայտնութեամբ, նախ ինքը դաւանեց յետոյ երկրաւորների մակարդակին իջնելով, թէ քաւ լիցի քեզ Տէր, եւ Տիրոջը ծառաների հետ էր դասում տաղաւարների պատեհով: Դրա համար էլ Հայրը գաղտնիքների գործակից է դարձնում Որդու խորհրդակիցներին: Որ ուսանելով Հօրից այլեւ չմոռանան, որոնք մեծ ցանկութեամբ լսում էին Որդուց, բայց մոռանում էին: Երկրորդ՝ այս ձայնը լսեցին առաքեալները, քանզի երբ քահանայապետը երդմամբ ուզում էր իմանալ թէ՛ «Դո՞ւ եւ Օրհնեալի Որդին», իսկ Պիղատոսը հարցնում էր՝ «Դո՞ւ եւ Քաղաւորը», առաքեալները հաւատացնում էին ժողովրդին, թէ այս բարբառը մեծ իմաստներս լսեցինք, երբ նրա հետ Սուրբ լեռան վրայ էինք, թէ՛ «Դա է իմ սիրելի Որդին, հաստատուն եւ ստոյգ Որդին, որին հաւանեցի: Ոչ միայն որպէս Որդի եւ սիրելի, նաեւ հաւանում եմ նրա բոլոր գործերին եւ միաբան լինելուն եւ իմ կամքը կատարելուն»:

Այսինքն՝ եթե կամենում է խաչ բարձրանալ եւ կամ որեւէ այլ բան անել մի ընդդիմացե՛ք, զի ով լսում է Որդուն՝ մեծ արում է Հօրը:

«Դա է իմ սիրելի Որդին, որին հաւանեցի, լսեցե՛ք նրան»: Դարձեալ՝ նոյն վկայութիւնը, որը երբեւէ Յորդանան գետում մկրտուելիս Հօր ձայնը դաւանեց, քանզի մինչ այդ ծածուկ էր մարդկանցից, նաեւ ակնկալում էր մկրտութիւնից յետոյ հրաշքներ կատարել, վայելչաբար Հայրը վկայութիւն էր տալիս Տիրոջ այն խորհրդածութեամբ, թէ նրա հանութեամբ ու սիրով է կատարում:

Յովհաննէս Մկրտչի վերաբերեալ նոյնպէս, քանզի նրան էին մեծ համարում, լինելով քահանայի որդի եւ հրաշքով ծնուած, որի մօտ ուղարկեցին, «Դու ես, որ գալու ես, թէ ուրիշին ակնկալեմք»:

Արդ՝ եկաւ խօսքը եւ իջաւ Հոգին, որ հոչակաւոր դարձնի իր Որդուն, այս ամէնով հանդերձ վկայեց, իսկ այստեղ, որ կրկնեց Պետրոսի դաւանութեան համար, ի հաստատութիւն եւ նրա խորհուրդների ընդդիմութեան փարատման, որ խաչի վերաբերեալ հակառակում էր, կարծես թէ ասելով նրան. «Մի հակառակուիր մարդկային մահկանացու ցեղի վերակենդանացմանը: Քանզի նա քեզ առաւել սիրելի չէ, քան ինձ, որովհետեւ իմ ծոցից ծնուած բխումն է Հայրական սրտիս եւ ինձ առաւել մի նուաստացրու քան Աբրահամին եւ անգութ ցոյց տուր, քանզի նա իր միածին եւ միամօր սիրելին, աւետիսների ծնունդը չխնայեց ինձ համար: Արդ, մի՛ ետ պահիր նրա սիրուց, որը շտապեց, պարտաւորեցնելով ինձ: Դա ինձ համար ոչ թէ մտերմութիւն է, այլ թշնամութիւն»: Եւ նոյնիսկ միաձայնութեամբ ասաց, արգելելով նրան, որը խորհում էր խափանել համաշխարհային փրկութիւնը: Բայց այստեղ դու տես նշմարիտ Աստուածաբանութիւնը, որը երբ Հայրն է աստուածախօսում եւ Որդու

մասին աստուածաբանում ի՞նչ պէտք է ասել, ինչպէս որ Հայրը վկայեց Որդուն, այնպէս էլ Որդին Հօրը՝ ասելով. «Դա է իմ սիրելի Որդին», եւ ոչ թէ նրա մէջ է: Աստուածութիւնը մարմնով հանդերձ մի Որդի դաւանեց: Եւ Որդի է ասում համագոյութեան համար, զի Հօր բնութիւնից է եւ սիրելի: Քանզի սիրոյ ծնունդ է, իրօք սիրելի է, ինչպէս որ ասում է. «Սիրում եմ Մարմնացեալ Բանին, որն իմ հաւատարիմ Որդին է եւ Աստուածը»:

«Որին հաւանեցի»:

Քանզի շատերը շնորհներով կոչուած սիրելի որդիներ եղան, ըստ այնմ. «Իմ Իսրայէլ որդին՝ անդրանիկ է եւ ես սիրեցի նրան»: Բայց յետոյ ապստամբ գտնուեցին եւ չհաւանեց նրանց, իսկ Յիսուսին ասաց. «Հաւանեցի», այսինքն՝ սրբազան աստուածային գաղտնիքի կատարման հետ, քանզի նրա միջոցով կը փրկագործուի մարդկային ցեղը, մանաւանդ, երբ ասաց, թէ՛ «Նա էր, որ հաւանեց իմ կամքը», քանզի որ ի սկզբանէ բարկացել էր Ադամի յանցանքների համար:

«Դա է իմ սիրելի Որդին»:

Դարձեալ, քանզի որ շատ անգամներ իր անձը Աստուծոյ Որդի կոչեց, բայց հրեաները քակոծում էին, թէ՛ «դու օրինազանց մարդ լինելով՝ քո անձը Աստուածացնում ես»:

Եկաւ ձայնը եւ վկայեց, թէ՛ «Դա է իմ սիրելի Որդին» եւ ոչ թէ ձեր կարծածի պէս՝ հակառակը:

6.- «Երբ լսեցին աշակերտներն, ընկան երեսն ի վայր եւ խիստ վախեցան»: Ինչո՞ւ, երբ լսեցին քարքառը գարիւրեցին: Զե՞ որ սկզբում նման պատգամ լուեց Յորդանանում, եւ ինչպէս նշեցինք նաեւ Խաչի մօտ, երբ ժողովուրդն ասաց, թէ՛ «Մեծ որոտում եղաւ», սակայն ոչ մէկը չքմրեց, սակայն այստեղ՝ ընկան:

Նախ՝ որ անապատ եւ անմատչելի տեղում էին եւ անընդհատ փոփոխում էր

Տիրոջ դեմքը, ինչպես նաև սաստիկ լույսն ու ամպի տարածուելը եւ ձայնը նոյնպես, այդ պատճառով է որ ընկան գետնին: Իսկ մնացեալ տեղերում այսչափ երկիւղ չկար՝ այլ միայն ձայնն էր, եւ ժողովուրդն էլ առընթեր երկրպագեցին:

Երրորդ՝ որովհետեւ մարմնական եւ եղական բնութիւնը չի կարող տանել Հօր ամաւարմին եւ արարչական տեսքը: Քանզի Դանիէլը գումատուեց հրեշտակին տեսնելով, իսկ Եզեկիէլը երեսի վրայ ընկաւ, ապա ի՞նչ կարող եւ ասել այժմ, երբ Հայրը՝ Սուրբ Հոգով եւ Որդով հանդերձ յայտնուած երեւում էր այնտեղ:

Զորրորդ՝ քանզի անկատար էին, Յիսուս Քրիստոսի Ծննդեամբ տնկիներ դարձած, ձայնից, որ երկնքից էր գալիս հողմի պէս, զարհուրում էին: Իսկ երբ որթատունկի ընծիւղներ դարձան Տիրոջ Յարութեամբ, այնժամ երկիւղ չէին կրում, երբ սաստիկ հողմի նման փչեց Վերնատանը Սուրբ Հոգին:

7.- «Իսկ Յիսուսը մօտենալով հարուածեց նրանց ասելով. Ոտքի ելէ՛ք եւ մի երկնչէ՛ք»:

Որպէս զի սաստիկ ահը չզարհուրացներ եւ նրանց մտքից չնչէր իրողութիւնը, դրա համար էլ փարատում է երկիւղը գործով եւ խօսքով, քանզի երբ Հօր ձայնը իջաւ ի խոնարհ, Որդու ձեռքը վեր բարձրացրեց եւ կանգնեցրեց հաստատութեամբ:

Իսկ Ղուկասն ասում է, թէ «Պետրոսը եւ նրա հետ եղողները անուշահոտ բուրմունքից կամ տեսիլից ապշած, կարծես, խորը բուն էին մտել», քանզի երբ պետք էր հսկել, նրանք ահի մէջ ընկան, որով էլ յայտնի եղաւ, թէ չեն կարող դիմանալ տեսութեանը՝ նախքան չարչարանքի կրթութիւնն անցնելը, ինչպէս խեղդէն անօքն են անցկացնում բուրայով, քանզի նախ՝ չարչարանքներին հաղորդակից պետք է լինէին եւ ապա փառքերին: Դրա

համար էլ ասաց, թէ. «Մի երկնչէ՛ք»:

Իսկ խորհրդանշօրէն նրանց ընկնելը ցոյց էր տալիս Ադամի անկումը, որն էլ խօսքով անկում ապրեց, թէ՛ «Որ օրը ուտէ՛ք, մահով կը մեռնէ՛ք»: Իսկ Հօր ձեռք Որդին՝ հարուածելով մարմնին, վերստին ոտքի կանգնեցրեց:

8.- «Հայեացքները վեր բարձրացնելով, քացի Յիսուսից ոչ ոքի չը տեսան»:

Քանզի ինչպէս Յորդանանում զարտորոշեց նրան Յովհաննէսից Սուրբ Հոգու իջմամբ, այդպէս էլ այստեղի միայնութիւնը, որ յայտնի լինի, թէ ուրիշ ոչ մէկի համար չեկաւ Հօր ձայնը, այլ միայն Քրիստոսի:

Եւ դարձեալ՝ անհետացան Մովսէսն ու Եղիան: Սուրբ Հոգին, որը բերեց Եղիային եւ Մովսէսին եւ կանգնեցրեց, նրանց խօսակցութիւնից յետոյ յափշտակեց տարաւ նոյն տեղը: Քանզի ոչ թէ Որդուն էր պետք սովորել, որ կանխագոյն ստուգուած էր, այլ որ աշակերտներն ուսանեն, որոնք չգիտէին, թէ յանուն ինչի եղաւ նրա գալուստը:

Դարձեալ՝ նրանք հեռացան, որ չզբաղեցնեն իրենց բռնեքով, այլ ուշադիր լինեն Հօր խօսքին, որ Տիրոջ խօսքը չխառնուէր ծառաների խօսքին եւ նրանց միտքը պղտորուէր եւ մոռանային, թէ՛ «Երուսաղէմից դուրս գալը» Հօր եւ մարգարէների կողմից ասուեց, դրա համար էլ միայն Յիսուսը մնաց, որ կատարուի նրանց խօսքը:

9.- «Եւ մինչդեռ իջնում էին լեռան կատարից, Յիսուսը պատուիրեց նրանց եւ ասաց. «Ոչ մէկին չպատմէ՛ք տեսիլն այդ, մինչեւ Մարդու Որդին Յարութիւն առնի մեռելներից»:

Քանի որ, երբ սաստեց աշակերտներին, որ «ոչ մէկին չասէ՛ք, թէ եւ եմ Քրիստոսը»: Ինչպէ՞ս չյայտնես այսպիսի չմաղ յայտնութիւնը, մինչ այն ժամանակ: Քանզի որքան շատերն

իմանային պատմելով նրանից, այնչափ առաւել դժուարեցնել կը լինէր բազմաց համար խաչի գայթակղութիւնը: Իսկ, երբ շարժի եւ Սուրբ Հոգով արժանացնի, այնուհետեւ ընդունելի կը լինի եւ շեփորի ձայնից առաւել կ'աղաղակեն իրողութիւնը: Նաեւ գիտէր, որ նրանց չեն հաւատայ, այլ մոլորութեան կը համարեն, թէ «Որտեղի՞ց էք գնաչում եղիային, ինչպէս նաեւ, Մովսէսի գերեզմանի տեղը ոչ ոք չգիտէ», այնուհետեւ կը լինէր հայհոյութիւն: Դրա համար էլ ասաց, «Համբերե՛ք, մինչեւ որ զօրութիւնը կ'ընդունէ մեռելներին յարութիւն տալու, եւ գերեզմանները կը պատառոտուեն, եւ հիմ ու նոր արդարները դուրս ելնելով կը գան մեծ թագաւորի ֆաղաքը՝ Երուսաղէմ: Այնուհետեւ կը հաւատան նաեւ նրանք՝ որ եթէ նա, որը յարութիւն տուեց նրանց, նոյն ինքն՝ յարութիւն կարող է տալ նաեւ Մովսէսին: Եւ, եթէ մեռածները լսելով եկան, ապա որքան եւս եղիան, որը կենդանի է: Դրա համար էլ խնդրում պահել ոչ մշտապէս, այլ երբ գայ իր յայտնութեան ժամանակը: Նաեւ տարածամ չֆարոգել նրա անունը, քանզի տակաւին չարքարանքների ժամանակն է, եւ միայն Յարութեամբ կը յայտնուի նրա տէրութիւնը, որի միջոցով էլ դիւրութեամբ կը հաւատան Յարութեան խորհրդին:

Արդ, երանելի են առաքելները, մանաւանդ այս երեքը, որոնք այսպիսի գեղապանծ լոյսի մաքրութեամբ վայելչացան եւ ամպի մէջ մտնելով յարկակից եղան Տիրոջն ու ընդհանուր Յարութեան խորհրդին այստեղից վարժուեցին:

Բայց եթէ կամենանք, մենք նոյնպէս կը տեսնենք Քրիստոսին, սակայն ոչ թէ ինչպէս նրանք տեսան այն ժամանակ, այլ առաւել լուսաւորագոյն, քանզի այնտեղ թերի եւ կիսաբաց արեց պայծառութիւնը՝ խնայելով նրան, իսկ յետոյ ակներեւ յայտնի կերպով կը գայ, ոչ միայն

Մովսէսով եւ եղիայով, այլ Հօր անեղբ փառքերով եւ հրեշտակաց բազմութեամբ: Ոչ թէ գլխածածկ ամպով կ'երեւայ, այլ երկինքն իսկ ամբողջութեամբ կը գալարուի:

Ինչպէս օրինակ, երբ դատաւորները հրապարակաւ դատ են անում, սպասաւորները՝ հեռացնում են դէմքի ծածկոցը, որ բոլորը տեսնեն: Նմանապէս էլ նա, երբ նստի դատաստանի աթոռին, ողջ մարդկութիւնը կը տեսնի Նրան, եւ ինքն անձամբ կը պատասխանի նրանց: Ոմանց ասելով. «Եկէ՛ք Հօրս որհնեալներ եւ ժառանգեցէ՛ք», իսկ մնացածին, թէ՛ «Գնացէ՛ք հուրը, որը պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակներին համար», որից թող փրկի իր անուան հաւատացողներին մեր Քրիստոսն ու Աստուածը, եւ արժանի դարձնի վայելելու աջակողմեան դասն Աստուածութեան, փառքերի իր ճշմարիտ յայտնութեամբ, որին վայել է ամենայն փառք՝ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աշխարհաբարի վերածեց
Յ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ